ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (37410) 525481, 569 569, 569 097
ֆաքս + (37410) 587 586

16.09.14թ. № Սմ11/1.2/6260-14

Ձեր ________ առ ________

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
իրավաբան Գևորգ Հայրապետյանին
/ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ/

Ի պատասխան ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հասցեագրած Ձեր 14.07.2014թ. թիվ 220-ի 6 գրության, հայտնվում է, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված պահանջների կատարումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմում ի պաշտոնե ապահովում են քաղաքացիների սպասարկման գործառույթը իրականացնող համապատասխան սպասարկման գրասենյակների պաշտոնատար անձինք, կոմիտեի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանումներում անշարժ գույքի ու դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման լիազորություններ ունեցող պաշտոնատար անձինք, ինչպես նաև կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցները, որոնց կողմից նշված պարտականությունների իրականացման պահանջները սահմանված են համապատասխան պաշտոնատար անձանց քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում: Հաշվի առնելով կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող անշարժ գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատության տրամադրման աշխատանքների, ինչպես նաև դրանց վերաբերյալ խորհրդատվական ծառայությունների զանգվածային բնույթը, դրանց համակարգումը

իրականացվում է ըստ բնագավառների՝ կոմիտեի աշխատակազմի ստորաբաժանումների գործունեության համակարգման գործառույթների ներքո:

Ինչ վերաբերում է գրության 2-րդ կետում նշված հարցմանը, ապա հայտնվում է, որ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն իրականացվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և 33-րդ հոդվածի պահանջների համաձայն:

Ա. Մուսայան

Հ. Մարտիրոսյան
Խ. Գասպարյան
585319